ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. հունվարի 22

N 6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> և << ԱՇՏԱՐԱԿԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ- ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի թիվ 4 հիմնական դպրոց>> և <<Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի գլխավոր մասնագետներ՝ Իշխան Բարսեղյանի, Սիրան Ասատրյանի և Արիս Թովմասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2.Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 12 աշխատանքային օր, աշխատանքները սկսել 2013 թվականի հունվարի 24-ից ավարտել 2013 թվականի փետրվարի 11-ին:

Ժ/Պ

Ա. ԱՐՍԵՆՅԱՆ